



## ՄԵՂՈՒՆ ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԽԱՅԹԵ

Մեղուին խայթոցը սուր ասեղ է՝ բազմաթիւ մանր փուշերով եւ դեպի թոյնով լեցուն փոքրիկ պարկը տանող խողովակով: Ան, իբրեւ պաշտպանուելու միջոց կը ծառայէ միջատին: Մեղուն հազուադեպ կը գործածէ այդ ասեղ գէնքը, չէ՞ որ այդ գէնքը գործածելով մեղուն շուտով կը սատկի: Բայց ինչո՞ւ:

Կենդանիի կամ մարդու մարմնի մէջ խրուած թունաւոր պզտիկ ասեղը մեղուն դուրս չի կրնար հանել, փուշերը արգելք կըլլան: Թռչիլ փորձելով՝ միջատը կը փրցնէ խայթոցը եւ անոր հետ՝ ներքին օրկաններուն մէկ մասը:

Մեզի համար մեղուին թոյնը վտանգաւոր չէ, բայց այս միջատին բազմաթիւ թշնամիներուն համար ան մահացու է:

Մեղուները երկիր մուրակի վրայ ապրող ամենաօգտակար միջատներէն են: Բոլորը գիտեն, որ այդ անխոնջ աշխատաւորները մեզի կու տան շատ համեղ եւ օգտակար արտադրանք մը՝ մեղր: Մեղրը բուժիչ յատկութիւն ունի: Պատահական չէ, որ մեղրը յայտնի էր դեռ հնագոյն ժամանակներէն եւ կը կոչուէր «Ոսկի հեղուկ» եւ «Աստուածներու կերակուր»:

## ՄԵՂՈՒՆԵՐՆ ՈՒ ԻՐԵՆՑ ՈՍԿԻ ՀԵՂՈՒԿԸ

Սակայն մեղուները ոչ միայն կարելոր են մեզի համար, այլ անոնք մեծ օգուտ ունին նաեւ բնութեան: Բոյսերը մեղուներուն կու տան փոշի եւ նեկտար: Երբ մեղուները նեկտար կը հաւաքեն, փոշին կը փակի անոնց տոտիկներուն եւ աղումագով պատուած մարմինին: Ծաղիկէ ծաղիկ թռչելով մեղուները կը տեղափոխեն փոշին եւ այդ ձեւով կ'օգնեն բոյսերու բազմացման: Եթէ չըլլային այդ ժրջան միջատները, ո՛չ խնձորենին, ո՛չ երեքնուկը, ո՛չ բալենին, ո՛չ վարունգը, ո՛չ ալ արեւածաղիկը լաւ բերք պիտի տային: Մեղուներու շնորհիւ անտառներու եւ դաշտերու մէջ կը հասունանան վայրի բուսակեր կենդանիներու սնունդ տուող բազմաթիւ բոյսեր:

Սակայն այսօր մեղրատու մեղուները անհետացման վտանգի տակ են: Անոր պատճառը գիւղատնտեսութեան մէջ քիմիական թունաւոր նիւթերու օգտագործումն է, որոնք մեծ քանակութեամբ մեղուներ կ'ոչնչացնեն:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՐԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԲԵԱՆ  
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՄԵԱՆ



# ԴՈՒՆ ՀԱՐՑՈՒՐ, ԿԿՈՒՆ ԹՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԷ

## ԻՆՉՈ՞Ւ ԶՆԱՐԱԾ ԵՆ ԶՈՎԱՆՈՅՑ

Ո՞վ եւ ե՞րբ հնարած է հովանոցը ոչ ոք գիտէ: Սակայն յայտնի է, որ Զ.ա. 11-րդ դարուն Չինաստանի բնակիչները կիզիչ արեւէն պաշտպանուելու համար օգտագործած են հովանոցը: Բաբելոնի եւ Յին Եգիպտոսի մէջ հովանոցը իշխանութեան խորհրդանիշ կը համարուէր եւ գայն գործածելու իրաւունք ունէին միայն թագաւորական ծագում ունեցող անձեր:

Հին հռոմէացիներն էին, որ առաջին անգամ օգտագործեցին հովանոցը անձրեւէն պաշտպանուելու համար: 18-րդ դարէն սկսեալ այս անհրաժեշտ իրը մուտք գործեց եւրոպացիներուն կենցաղին մէջ: Հովանոցին ձեւը գրեթէ չէ փոխուած ստեղծման օրէն մինչեւ օրս, միայն ներկայիս աւելի փոքր ու թեթեւ է ու կարելի է գայն տեղաւորել մեր պայուսակին մէջ:

## Ո՞Ր Է ԿԱԿԱԶՆԵՐՈՒ ԶԱՅՐԵՆԻԲԸ

Շատերու սիրած կակաչները հին ժամանակ յայտնուած են Պարսկաստանի մէջ: Այդտեղէն փոխադրուած են Թուրքիա, ապա Վիեննա, ուրկէ արագօրէն տարածուած են ամբողջ Եւրոպայի մէջ:

Կակաչները լայն տարածում ունեցած են Հոլանտայի մէջ, ուր բազմաթիւ տեսակներ բուծանած են:

Այդ ծաիկներու կոճղէզները միայն հարուստ մարդիկ կրնային ունենալ, որովհետեւ շատ սուղ էին:

Այսօր ալ Հոլանտայի մէջ կակաչներու բազմաթիւ տեսակներ կ'աճեցնեն եւ կ'արտածեն աշխարհի տարբեր երկիրներ:




# ԽԱՂԷՐ

Իւրաքանչիւր նախադասութեան մէջ տեղադրեցէ՛ք տուեալ բառերէն յարմարը:  
 Ճաղիկ, քուն, վաղուան, նոր, դող, թոյնը, արթուն

Գող՝ սիրտը -----:  
 Մէկ -----ով գարուն չի գար:  
 Այսօրուան գործը ----- մի՛ ձգէր:  
 Դուն ----- բախտդ -----:  
 Օձի կաշին ----- է, ----- հին:

Ձախ կողմի սիւնակի իւրաքանչիւր բառը միացո՛ւր աջ սիւնակի համապատասխան հոմանիշին:

լեռ	խելագար
ծամօս	իղձ
հեզ	տհաս
խենթ	սար
խուճապ	դառն
լայն	իրարանցում
փափաք	առարկայ
լեղի	ձիւթ
խակ	խոնարհ
իր	ընդարձակ



Կրնա՞ս գտնել վիշապին հասցնող ճամբան:



**«Բոլոր ստուք,  
որոնք գեղեցիկ  
զայն ունին ՀՐԱ-  
ԻՐՈՒԱԾ են մաս-  
նակցելու երգի  
մրցումին»**

## ՇՈՒՇԱՆԻԿԻՆ ԵՐԱԶԸ

Ժամանակին Շուշան անունով, գեղեցիկ ձայնով աղջիկ մը կ'ապրեր իր մեծ հոր աղքատիկ տնակին մէջ:

Շուշանիկը ինք ստանձնած էր մեծ հոր խնամատարութիւնը: Ան ամէն առաւօտ նախաճաշ պատրաստելէ ետք, ջութակը կ'առնէր, փողոց կ'ուղղուէր եւ փողոցներուն մէջ ջութակի ընկերակցութեամբ կ'երգէր իր երգով ու նուագով կ'արժանանար անցորդներուն հիացմունքին: Անոնցմէ ոմանք, նոյնիսկ իրենց գործերը մոռնալով ժամերով կը կենային ու կը լսէին այդ գեղեցիկ ձայնն ու նուագը:

Անցորդները դրամական նուէրներով կը գնահատէին Շուշանիկը: Շուշանիկ այդ դրամներով կ'ապահովէր իր եւ մեծ հորը ապրուստը:

Օր մը երբ սովորականին նման իր անբաժանելի ընկերոջը՝ ջութակին հետ քաղաքի փողոցներէն մեկուն մէջ կը շրջէր, աչքին զարկաւ յայտարարութիւն մը, որուն վրայ գրուած էր՝ *«Բոլոր անոնք, որոնք գեղեցիկ ձայն ունին հրաւիրուած են մասնակցելու երգի մրցումին»:*

Այս յայտարարութիւնը շատ կ'ոգէտորէ Շուշանիկը, որովհետեւ անոր կեանքի երազն էր, փողոցի մայթերուն փոխարէն սրահի մը հարթակին վրայ երգելը:

Ան ամբողջ գիշերը կը մտածէ այս մրցումին մասնակցութեան իր յարմարութիւններուն մասին եւ վերջապէս որոշում կ'առնէ, մասնակցիլ այս մրցումին, թէկուզ ջաղթել, սակայն գէթ մէկ անգամ բեմի մը վրայ երգելու առիթ ունենար:

Յաջորդ առաւօտ ան մասնակցութեան խնդրագիրը կը ներկայացնէ մրցանակը կազմակերպող ընկերութեան, պաշտօնեան թուղթերը կը ստանձնէ, սակայն կը տեղեկացնէ թէ մասնակցութեան համար տասը ոսկի պահանջուած է: Շուշանիկի գրպանին մէջ միայն չորս ոսկի կար...

(Շարունակելի)

# ՁԻԹԱՊՏՈՒՂԻ ԾԱՌԸ



Ձիթապտուղի ծառին հայրենիքը կը համարուի Մերձաւոր Արեւելքը ընդհանրապէս եւ Սուրիան առանձնապէս: Սուրիոյ միջոցով ձիթապտուղի ծառը հասած է մինչեւ Եւրոպա եւ մշակուած նաեւ այլ տեղեր:

Գրականութիւնը կը փաստէ որ փիւնիկեցիները սկսած են մշակել ձիթապտուղի ծառը նաեւ Միջերկրական Ծովու երկիրներուն մէջ: Այլ աղբիւրներ կը խօսին այն մասին թէ՛ ձիթապտուղի ծառը ծանօթ էր Եգիպտոսի փարաւոններուն մօտ: Ծանօթ է նաեւ այն իրողութիւնը, որ ձիթենին կը մշակուէր Յունաստանի եւ Սիկիլիոյ կղզիին վրայ՝ Զոմերոսի ժամանակ, նաեւ աւելիով՝ Զոմմեացիներու ատեն:

Ձիթենին մեծապէս տարածուեցաւ արաբական պատերազմներու ժամանակ, որովհետեւ արաբներն էին որ փոխադրեցին այս ծառը դէպի այն երկիրները, ուր անոնք հաստատեցին իրենց իշխանութիւնը: Եւ այդ օրերէն մինչեւ այսօր, ձիթապտուղի ծառը տարածուած է մասնաւորապէս Սպանիոյ մէջ, որ կը գրաւէ առաջին դիրքը ձիթապտուղի արտադրութեան մէջ, ապա՝ Իտալիան, Յունաստանը, Փորթուկալը եւ Թունուզը:

Ձիթապտուղի ծառին մշակումը մեզի կու գայ հին ժամանակներէն: Ան յիշատակուած է առապելներու, ինչպէս նաեւ մեծ կրօնքներու սուրբ գիրքերուն մէջ: Աստուածաշունչը կը գրէ թէ ինչպէս Տէր Յիսուս ընտրած էր, ձիթենեաց պարտեզը աղօթելու համար: Մինչեւ այսօր, մենք՝ քրիստոնէաներս, կը զարդարենք եկեղեցիներն ու սրահները ձիթենիի ճիւղերով եւ տերեւներով, մասնաւորապէս Ծաղկազարդի տօնին առիթով:

Ձիթապտուղի ծառի մօտաւորապէս վաթսուն տեսակներ կան: Ծառը կ' ունենայ 4-12 մէթր բարձրութիւն, կ'ապրի 400-500 տարի, երբեմն՝ մինչեւ 1000 տարի եւ աւելի: Ծառին տերեւները կ'ապրին 2-3 տարի: Անոր ծաղիկները դեղնասպիտակ գոյն ունին: Ձիթապտուղի մաշկը հաստ է, կանաչ մանիշակագոյն կամ սեւ գոյնով:

## ՁԻԹԱՊՏՈՒՂԻ ՍՆՆԴԱԿԱՆ ԱՐԺԵՐԸ

Կը պարունակէ 79 % խոնաւութիւն, 17,5% ձէթ, 2,19% մոխիր, 1,16% սպիտակուցներ (փրօթին), ջերմութ (1 կրամը հալասար է 162 քալորի), տարբեր մետաղներ, նաեւ (Ա, ՍԻ, ՊԻ6 եւ ՊԻ12) կենսանիւթերը:

Ձիթապտուղի ձէթը կը համարուի լաւագոյն ձէթերէն եւ օգտագործուած բոլոր ձէթերուն մէջ, մանաւանդ երբ անիկա կ'օգտագործուի մեր ճաշերուն մէջ: